



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

N 7, 8 (81, 82) հոկտեմբերի 21 – դեկտեմբերի 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	3
1.1 ՀՀ օրենքներ.....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	5
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ.....	7
2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ.....	8
2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....	8
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ.....	9
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ.....	11

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 ՀՀ օրենքներ

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	12.11.2015թ, ՀՕ-116-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №76 (1165), 18.11.2015թ
Ուժի մեջ է	28.11.2015թ.

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների համաձայն՝ **վերանայվել են ենթաակցիզային որոշ ապրանքների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը, ընդլայնվել է նաև ենթաակցիզային ապրանքների ցանկը:** Այսպես, բարձրացվել են **ալկոհոլային խմիչքների, բենզինի եւ դիզելային վառելիքի ու ծխախոտային արտադրանքի** համար ակցիզային հարկի դրույքաչափերը:

Միաժամանակ, **սեղմված բնական գազը, ներառվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում՝** տրանսպորտային միջոցներում օգտագործվող վառելիքի բոլոր տեսակների համար սահմանելով ակցիզային հարկով հարկման միատեսակ մոտեցումներ: Մասնավորապես, սահմանվել է, որ սեղմված բնական գազի դեպքում ակցիզային հարկ վճարող են համարվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող իրավաբանական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված օտարերկրյա իրավաբանական անձանց ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք: Հարկման դրույքաչափը 1000մ³-ի համար սահմանվել է 8330 դրամ:

Օրենքի գործողությունը տարածվում է **2016 թվականի մայիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:**

Փաստաթուղթ	«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	02.12.2015թ, ՀՕ-141-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 82 (1171), 09.12.2015թ
Ուժի մեջ է	10.12.2015թ

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ օրենքից հանվել է «գյուղական» բառը և այդ օրենքով սահմանված **հարկերից ազատման արտոնությունները կիրառելի են նաև ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ներառված քաղաքային համայնքներում իրականացվող գործունեության տեսակների մասով:**

Օրենքով սահմանվել է նաև, որ տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից, **եթե ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը սահմանված կարգով իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն:**

Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող՝ օրենքով սահմանված կարգով **ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը կարող են հրաժարվել** արտոնությունից իրենց գրանցման վայրի հարկային մարմին՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից:

Արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն արտոնությունից հրաժարվելու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում կարող են հաշվանցել ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության հետ անմիջականորեն կապված՝ մինչև արտոնությունից հրաժարվելու պահն առկա միայն վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների ապրանքային մնացորդի մասով մատակարարների տրամադրած հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում մաքսային հայտարարագրերում, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների գծով՝ ներմուծման հարկային հայտարարագրերում) առանձնացված և նախկինում չհաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	09.12.2015թ, ՀՕ-146-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 84 (1173), 14.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2016թ

Համառոտ նկարագիր

Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով հաստատված ցանկի 13-րդ կետով նախատեսված **զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման** գործունեության տեսակն իրականացնող անհատ ձեռնարկատերերը կարող են **ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվել** «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ անկախ տվյալ տարվա որևէ ժամանակահատվածի համար արտոնագրային վճար վճարող համարվելու հանգամանքից:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով տեղափոխված և (կամ) մաքսային պահեստներում տեղակայված ապրանքների հաշվառման և հաշվետվողականության ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29.10.2015թ, N1256-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°74 (1163), 04.11.2015թ
Ուժի մեջ է	05.11.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով տեղափոխված և (կամ) մաքսային պահեստներում տեղակայված ապրանքների հաշվառման և հաշվետվողականության ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:

Սույն որոշման գործողությունը տարածվում է 2016 թվականի հուլիսի 2-ից հետո ծագող իրավահարաբերությունների վրա:

Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում ապրանքների ներմուծման և շրջանառության որոշ հարցերի մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ ազգային ժողովի որոշում
Ամսաթիվը և համարը	24.11.2015թ, ԱԺՈ-185-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 80 (1169), 02.12.2015թ.
Ուժի մեջ է	12.12.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ վավերացվել է 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Բուրաբայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում ապրանքների ներմուծման ու շրջանառության որոշ հարցերի մասին» արձանագրությունը:

Արձանագրության դրույթները վերաբերում են այն ապրանքներին, որոնք ընդգրկված են երրորդ երկրներից Ղազախստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների ցանկում, և որոնց նկատմամբ Ղազախստանի Հանրապետության կողմից, Առևտրի համաշխարհային կազմակերպության պարտավորություններին համապատասխան, կիրառվելու են ավելի ցածր մաքսատուրքի դրույքաչափեր:

Արձանագրությամբ ՀՀ-ն ստանձնում է **2016 թվականի դեկտեմբերի 1-ից** ՀՀ մաքսային մարմինների կողմից այդ ապրանքների ներմուծման և Ղազախստանի Հանրապետության տարածքում մաքսային ընթացակարգերով ձևակերպելու վերաբերյալ հայտարարագրերի տվյալների և տեղեկությունների էլեկտրոնային եղանակով իրական ժամանակի ռեժիմում փոխանակումը, ՀՀ լիազոր մարմինների կողմից հաշվառման համակարգում պարունակվող տեղեկատվության փոխանցման կարգի և տեխնիկական պայմանների մշակումը և հաստատումը:

Փաստաթուղթ	«Հայտարարագիրը գրավոր ներկայացնելու դեպքում դրա էլեկտրոնային օրինակը ներկայացնել չպահանջող ապրանքների ցանկը, մաքսային ընթացակարգերը և դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	19.11.2015թ, N 1340-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 80 (1169), 02.12.2015թ
Ուժի մեջ է	12.12.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ապրանքների **մաքսային հայտարարագրումն** իրականացվում է միայն **գրավոր եղանակով՝** պետական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող ապրանքների համար:

Հայտարարագիրը գրավոր ներկայացնելու դեպքում դրա էլեկտրոնային տարբերակը ներկայացնել չի պահանջվում՝

1) այն ապրանքների համար, որոնք տեղափոխվում են հատուկ մաքսային ընթացակարգով.

2) այն դեպքերում, երբ ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է՝
 ա. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 44-րդ գլխին համապատասխան՝ միջազգային փոստային առաքումներով փոխադրումների դեպքում,

բ. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 45-րդ գլխին համապատասխան՝ դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների, այդ ներկայացուցչությունների, հիմնարկների և կազմակերպությունների անձնակազմերի, միջազգային պայմանագրերին համապատասխան՝ առավելություններից, արտոնություններից և (կամ) անձեռնմխելիությունից օգտվող օտարերկրյա անձանց առանձին կատեգորիաների կողմից ապրանքների տեղափոխման դեպքում,

գ. մաքսային հայտարարագրի փոխարեն տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերի օգտագործման դեպքում,

դ. ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման դեպքում:

Փաստաթուղթ	«Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողման համար թույլատրվող ապրանքների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	19.11.2015թ, N 1359-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 80 (1169), 02.12.2015թ
Ուժի մեջ է	12.12.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողման համար թույլատրվող ապրանքների ցանկը:

Փաստաթուղթ	«Մաքսատուրքի վճարման ժամկետի փոփոխությամբ ներմուծվող ապրանքների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26.11.2015թ, N 1399-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 81 (1170) ¹ , 04.12.2015թ
Ուժի մեջ է	14.12.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծման դեպքում հաշվարկված մաքսատուրքի վճարման ժամկետը կարող է փոփոխվել և որոնք նախատեսված են օգտագործելու արդյունաբերական վերամշակման ընթացքում:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի պետության կառավարության միջև մաքսային գործերում փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր
Ամսաթիվը և համարը	04.11.2015թ, ՆՀ-776-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 75 (1164), 11.11.2015թ
Ուժի մեջ է	12.11.2015թ.

Համառոտ նկարագիր

Հրամանագրով հաստատվել է 2014 թվականի նոյեմբերի 26-ին Երուսաղեմում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մաքսային գործերում փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը:

Փաստաթուղթ	«Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջների խախտման վերաբերյալ կամերալ (գրասենյակային) արձանագրության ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	14.10.2015թ, N 681-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 26 (538), 02.11.2015թ
Ուժի մեջ է	12.11.2015թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվել է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջների խախտման վերաբերյալ կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արձանագրության ձևը:

Փաստաթուղթ	«2015 թվականի հունվարի 2-ից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	11.12.2015թ, N 11
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 30 (542), 18.012.2015թ
Ուժի մեջ է	25.09.2015թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանման համաձայն, այն դեպքերում, երբ **ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից** ներմուծվող ապրանքները հայտարարագրվում են «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, օրենքով սահմանված դեպքերում վճարման ենթակա **ավելացված արժեքի հարկը և (կամ) ակցիզային հարկը** մաքսային մարմիններին վճարվում են **մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում**, բայց ոչ ուշ, քան «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների բացթողումը:

ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծման դեպքերում ապրանքների ներմուծման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետի ավարտից մինչև սույն պաշտոնական պարզաբանման 1-ին կետով սահմանված ժամկետը ներառվող օրերի համար «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված տույժերը չեն հաշվարկվում:

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.10.2015թ-ից մինչև 20.12.2015թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 10 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 24 ծառայողներ ենթարկվել են տարբեր տեսակի կարգապահական պատասխանատվության:

20.10.2015թ-ից մինչև 20.11.2015թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 44 որոշում, որից բավարարվել է՝ 20, բավարարվել է մասնակի՝ 7, մերժվել է՝ 9, կասեցվել է՝ 5, կարճվել է՝ 3 բողոք:

20.11.2015թ.-ից մինչև 20.12.2015թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել

են 43 որոշում, որից բավարարվել է՝ 27, բավարարվել է մասնակի՝ 2, մերժվել է՝ 12, կասեցվել է՝ 1, կարճվել է՝ 1 բողոք:

2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ¹

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարի 2015		
			Հոկտեմբեր	Հունվար-Հոկտեմբեր	Աճի տեմպ %
			28	29	30
1	ՀՀ ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք ³	մլն դրամ	93,243.3	878,839.2	100.4
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում	մլն դրամ	90,817.4	852,398.52	100.6
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	38,247.68	351,668.24	95.1
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	5,348.2	34,430.4	-
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	6,832.5	86,752.9	92.1
1.1.3	Եկամտային հարկ ⁴	մլն դրամ	27,636.2	258,680.5	105.9
1.1.4	Ալցոհոլային հարկ, այդ թվում	մլն դրամ	4,680.2	39,764.8	99.9
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	359.9	2,853.0	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,729.6	9,906.7	73.1
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	478.8	5,509.5	98.2
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	255.3	2,563.3	58.3
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	2,806.9	26,198.8	114.5
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	4,974.8	51,671.8	123.6
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	4,496.1	44,108.1	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	975.2	8,573.2	-
1.1.11	Այլ հարկային եկամուտներ ⁵	մլն դրամ	2,200.3	11,108.7	102.0
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,425.8	26,440.64	94.5

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարի 2015		
			Նոյեմբեր	Հունվար-Նոյեմբեր	Աճի տեմպ %
			31	32	33

¹ Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

1	«ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք» ³	մլն դրամ	90,693.8	969,532.9	100.4
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում	մլն դրամ	88,386.0	940,784.5	100.3
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	37,993.2	389,661.5	94.92
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	5,668.4	40,098.8	-
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	6,827.3	93,580.2	92.0
1.1.3	Եկամտային հարկ ⁴	մլն դրամ	29,159.2	287,839.7	106.4
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում	մլն դրամ	4,626.5	44,391.3	100.1
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	362.1	3,215.1	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,011.2	10,917.9	74.5
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	490.8	6,000.3	98.0
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	321.0	2,884.3	62.0
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	1,969.5	28,168.2	109.8
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	4,658.9	56,330.7	122.6
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	4,373.3	48,481.3	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	977.3	9,550.5	-
1.1.11	Այլ հարկային եկամուտներ ⁵	մլն դրամ	351.0	11459.7	100.5
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2307.8	28748.4	94.9

2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ. հոկտեմբեր
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	2162
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1825
1.2	Իրավաբանական անձ	հատ	337
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	137
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	2,091.4
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2015թ. հունվար- հոկտեմբեր 16343
5.1	Բավարարված	հատ	627
5.2	Մերժված	հատ	15
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	9561
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ դրամ	12.781
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	27309
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	515,8
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2213
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլրդ դրամ	5.882
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման	հատ	147

	վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ		
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	1,713
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	633
10.1	Ավարտված	հատ	27
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	27
10.3	Կասեցված	հատ	27
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	8.057

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ. նոյեմբեր
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	2426
1.1	Ֆիզիկական անձ	հատ	2129
1.2	Իրավաբանական անձ	հատ	297
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	144
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	2,985.2
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2015թ. հունվար-նոյեմբեր 18800
5.1	Բավարարված	հատ	740
5.2	Մերժված	հատ	19
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	10815

6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ դրամ	14.503
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	30854
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	593,6
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2476
8.1	Հարկ վճարողներին գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլրդ դրամ	6.688
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	165
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	1,925
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	633
10.1	Ավարտված	հատ	30
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	30
10.3	Կասեցված	հատ	33
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	8.307